ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 07

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 25-ի թիվ 02 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2021թվականի հունվարի 25-ի
Թիվ 02 արտահերթ նիստի N07 որոշման

# ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՇՏՈՑ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 08-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով ՀՀ Արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 51-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2021թվականի հունվարի 25-ի
N 08-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բյուջեի եկամուտների մասով

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված կապիտալ սուբվենցիան՝ 11658.7 հազ. ՀՀ դրամ ավելացնել ֆոնդային բյուջեի եկամուտների մասում «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/>> տողում՝ Առատաշեն համայնքի մանկապարտեզի երկրորդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքների պայմանագրային գնի 50%-ի մասով՝ որպես պետական աջակցության ցուցաբերում և նախատեսել՝ Բաժին 09.1.1-ի 5113 և 5134 հոդվածներին

2. Ծախսային մասով

Բաժին 09.1.1 (Նախադպրոցական ուսուցում)-ի

1) 5113 հոդվածին ավելացնել 11373.7 հազ. ՀՀ դրամ

2) 5134 հոդվածին ավելացնել 285.0 հազ. ՀՀ դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 09

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2021թվականի բյուջեի 10.7.1-ի /սոցիալական օգնություն/ 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
2021թ. հունվարի 25-ի
Թիվ 02 նիստի N09 որոշման

ՑՈՒՑԱԿ

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

| | |
|---|---|
| 1. Անդրեասյան Գրիգոր Սուրիկի | 20.000 (քսան հազար)դրամ |
| 2. Բաղդասարյան Արմեն Հրաչի | 20.000 (քսան հազար)դրամ |
| 3. Նահապետյան Սարգիս Ռոբերտի | 20.000 (քսան հազար)դրամ |
| 4. Կիրակոսյան Արթուր Ջանիկի | 20.000 (քսան հազար)դրամ |
| 5. Մանուկյան Ռազմիկ Հրաչի | 20.000 (քսան հազար)դրամ |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 10

## ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՇՏՈՑ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի հունվարի 31-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված կարգը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2021թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու նպատակով Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի Մաշտոց փողոցի ասֆալտապատման ծրագրի սուբվենցիայի հայտերը:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4.1-րդ և որոշման 2-րդ կետով հաստատված կարգի 10-րդ կետերով սահմանված ժամկետում սույն որոշմամբ հաստատված սուբվենցիայի ծրագրային հայտերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ